

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Անահիտ Հակոբյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
ORCID ID: 0000-0002-3869-5261
anahithakobyan@litinst.sci.am
DOI: 10.54503/1829-0116-2023.2-43

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԵՐԱԶՆԵՐԸ

Բանալի բառեր - Խաչատուր Աբովյան, երագ, տեսիլք, Ազաթանգեղոս, Գրիգոր Լուսավորիչ, Պետրարկա, Դորպատյան օրագրեր:

Երագների վերլուծությունն ու մեկնաբանությունը, անշուշտ, բարդ, իսկ հաճախ անհնարին աշխատանք է: Բավական է ասել, որ երագների դասակարգման և գործառնության կողմի վերաբերյալ գոյություն ունեն հաճախ իրարամերժ վարկածներ: Բավական ուշագրավ է երագների յուրատիպ նմուշների առկայությունը հայ մեծ գրող և մտածող Խաչատուր Աբովյանի (1809-1848 թթ.) ստեղծագործության մեջ: Հետաքրքիրն այն է, որ դրանք ոչ թե գեղարվեստական հնարք են, այլ իսկապես կատարված իրողություն, որոնք նա բարեբախտաբար գրի է առել:

Սույն հոդվածում փորձ է արվում մեկնել դրանց բովանդակությունը՝ կիրառելով երագների տեսակավորման, բովանդակային դասակարգման և շարժառիթների վերաբերյալ նշանավոր հոգեբան Զիգմունդ Ֆրոյդի (1856-1939 թթ.) մշակած դրույթները:

Երագի թեմատիկան Աբովյանի ստեղծագործության մեջ հանդես է գալիս նաև այլ ժանրի երկերում: Հոդվածում անդրադարձել ենք Աբովյանի կյանքի վերջին տարիներին (1845-47 թթ.) գրված «Կարճառոտ պատմությունների» երկրորդ շարքում ընդգրկված «Երագ» պատումին: Այս ստեղծագործությունը վաղ վերածննդի դարաշրջանի նշանավոր հումանիստ, բանաստեղծ Ֆրանչեսկո Պետրարկայի (1304-1374 թթ.) երագների աշխարհաբար փոխադրությունն է, որը թաքնված է եղել հանճարեղ իտալացու լատիներեն բազմահատոր նամականու էջերում, սակայն չի վրիպել Աբովյանի պես խորաթափանց գիտնականի ուշադրությունից ու նրա գրչի գործությամբ ստանալով գեղարվեստական նոր հնչեղություն՝ դեռևս 19-րդ դ. 40-ական թվականներին մուտք է գործել հայ իրականություն:

Քննարկվող թեմայի շրջանակներում նաև ընտրողաբար վերլուծել ենք Աբովյանի մի շարք չափածո երկեր, որտեղ երագը, ծառայելով իբրև գեղարվեստական ատաղձ, կա մ հանդես է գալիս որպես հեղինակի ստեղծագործական մտքի հորինվածք, կա՛մ որպես ազգային ավանդական դիպաշարի տարր միահյուսվում նրա ինքնուրույն երկերի կառուցվածքին՝ դրանց, սակայն, հաղորդելով միանգամայն նոր բովանդակություն և իր իսկ ստեղծած միֆապոետիկական պատկերների միջոցով վկայում հայ մշակույթի ուժեղ ժառանգականության ու շարունակականության մասին:

Աբովյանի երագները նրա հարուստ ու առաքինի ներաշխարհի շարունակությունն են, և որքան էլ այնտեղ իշխեն անգիտակցականը (սեփական երագներում) կամ գիտակցականը (գեղարվեստական երկերում), միևնույնն է, դրանք համակված են հայրենիքի նկատմամբ մեծ սիրով և նրան հնարավորինս պիտանի լինելու բուռն ցանկությամբ:

Anahit Hakobyan
PHD in Philology
Institute of Literature after Manuk Abeghyan of NAS of RA
ORCID ID:0000-0002-3869-5261
anahithakobyan@litinst.sci.am

THE DREAMS OF KHACHATUR ABOVYAN

Key Words - Khachatur Abovyan, dream, vision, Agathangelos, Gregory the Illuminator, Petrarca, Dorpatian diaries.

The analysis and interpretation of dreams is certainly a difficult and often impossible task. Suffice it to say that there are often conflicting hypotheses regarding the classification and functional aspect of dreams. Even Aristotle expressed the idea that a dream is a type of thinking while asleep. In this regard, the presence of unique samples of dreams in the works of the great Armenian writer and thinker Khachatur Abovyan (1809-1848) is quite remarkable. The interesting thing is that these dreams are not artistic creativity, but reverberations of objective reality - Abovyan's dreams, which fortunately were written down by him and reached our days.

The present article is an attempt to explore their content by applying the thesis developed by the famous psychologist Sigmund Freud (1856-1939) on categorization and decodification of dreams, as well as the classification of motives.

The theme of dreams appeared in Abovyan's works also in other genres. In the article, we referred to the story "The Dream" included in the second series of "The Short Stories" written in the last years of Abovyan's life (1845-47). This work is in modern Armenian which revolves around the dreams of Francesco Petrarca (1304-1374), a famous humanist and poet of the early Renaissance period. The information on Francesco Petrarca's dreams were hidden in the pages of a multi-volume collection of letters in Latin written by the Italian genius, which did not escape the attention of an astute scientist like Abovyan. The work received a new artistic manifestation with the power of his pen and was introduced to the Armenian reality in the 40s of the 19th century.

Within the framework of the discussed theme, we have also selectively analyzed a number of Abovyan's verse works, where the dream/vision serves as an artistic creativity. One cannot fail to observe that dreams manifest themselves either as a means of the author's creative mind or integrated into the structure of his independent works. They are perceived as elements of the national traditional plot, waving completely new content and illustrating the strong heritage of the Armenian culture through his mythopoetic images.

Abovyan's dreams are continuation of his rich and virtuous inner world, and no matter how much the unconscious (in his dreams) or the conscious (in his works of fiction) rule there, they are filled with great love for the motherland and a strong desire to be as useful for it as possible.

Анаит Акопян
Кандидат филологических наук
Институт Литературы им. Манука Абебяна НАН РА
ORCID ID:0000-0002-3869-5261
anahithakobyan@litinst.sci.am

СНЫ ХАЧАТУРА АБОВЯНА

Ключевые слова: Хачатур Абовян, сон, видение, Агатангелос, Григорий Просветитель, Петрарка, Дерпатские дневники.

Анализ и толкование снов, конечно, сложная и часто невыполнимая задача. Достаточно сказать, что существуют противоречивые гипотезы относительно классификации и функционального аспекта сновидений. Еще Аристотель высказал мысль, что сновидение есть тип мышления во сне. В этом отношении весьма примечательно наличие уникальных образцов сновидений в творчестве великого армянского писателя и мыслителя Хачатура Абовяна (1809-1848 гг.). Интересно, что это не художественный прием, а реальные сны Абовяна, которые, к счастью были им записаны и таким образом дошли до наших дней. В данной статье

предпринята попытка истолковать их содержание, применяя принципы, разработанные известным психологом Зигмундом Фрейдом (1856-1939 гг.) относительно классификации сновидений и их мотивов.

Тема сна фигурирует в творчестве Абовяна и в других жанрах. В статье обращаемся к рассказу «Сон», вошедшем во вторую серию «Коротких рассказов», написанных Абовяном в последние годы его жизни (1845-47 гг.). Это произведение является изложением снов Франческо Петрарки (1304-1374 гг.), известного гуманиста и поэта эпохи раннего Возрождения, которые были зафиксированы гениальным итальянцем на страницах его много-томника «Писем» на латинском языке. Эти артефакты не ускользнули от внимания такого проницательного ученого, как Абовян, и силой его пера получили новый художественный резонанс, еще в середине 19-го века став достоянием армяноязычной аудитории.

В рамках обсуждаемой темы нами также выборочно проанализирован ряд стихотворных произведений Абовяна, где сон/видение, являясь художественной основой, выступает либо как творческий вымысел автора, либо как элемент национального традиционного сюжета. Тематика снов взаимосвязана с структурой самостоятельных произведений Абовяна, однако оно имеет новаторское содержание и через собственные мифопоэтические образы свидетельствует о мощной наследственности и преемственности армянской культуры.

Сны Абовяна являются продолжением его богатого и добродетельного внутреннего мира, и сколько бы там ни господствовало бессознательное (в его снах) или сознательное (в его художественных произведениях), все равно, они наполнены большой любовью к родине и огромным желанием быть ему максимально полезным.

Երազների վերլուծությունն ու մեկնաբանությունը, անշուշտ, բարդ, իսկ հաճախ՝ անհնարին աշխատանք է: Բավական է ասել, որ երազների դասակարգման և գործառնության կողմի վերաբերյալ գոյություն ունեն հաճախ իրարամերժ վարկածներ: Դեռևս Արիստոտելը հայտնել է այն միտքը, թե երազը մտածելու տեսակ է՝ քնած վիճակում (Արիստոտել, 2005, с. 423):

Այս առումով բավական ուշագրավ է երազի մի յուրատիպ նմուշի առկայություն հայ մեծ գրող և մտածող Խաչատուր Աբովյանի (1809-1848թթ.) ստեղծագործության մեջ: Հետաքրքիրն այն է, որ դա ոչ թե գեղարվեստական հնարք է, այլ իսկապես կատարված իրողություն՝ Աբովյանի տեսած երազներից մեկը, որը, բարեբախտաբար, նրա կողմից գրի է առնվել ու այդպիսով հասել մինչև մեր օրերը: Այն կապված է կյանքի ու մահվան հավերժական խնդրի հետ և ծնունդ է առել 1834 թ. նոյեմբերի վերջերին, երբ Աբովյանը դեռ Դորպատի համալսարանի ուսանող էր և ապրում էր հայրենիքից շատ հեռու: Անսպասելիորեն ստանալով հոր՝ Ավետիք Աբովյանի և մտերիմ ընկերոջ՝ Աղաջան Շերմազանյան-Վարդանյանցի մահվան բոթը, Աբովյանը մի այնպիսի անպատմելի ցավ է ապրում, որ հենց նույն օրն անկողին է ընկնում: «...յայնմ ատուր, յօրն ես լուայ, անկեալ յանկողնի մնամ անմխիթար...», - կարդում ենք նրա «Դորպատյան օրագրերում» (Աբովյան, №16ա, էջ 203. Աբովյան, 1955, էջ 304): Անկարող լինելով հարազատների հետ կիսել իր վիշտը՝ կարդում է Նարեկի՝ փորձելով նրա մեջ գտնել իր մխիթարությունը:

¹ Միջնադարյան հանճարեղ փիլիսոփա և բանաստեղծ Գրիգոր Նարեկացու «Մատենանոցերգութեան» երկի ժողովրդական անվանումը:

Երագում հայտնվում է հարազատ գյուղում, տեսնում մորն ու հանգուցյալ հորը. «Ինձ թուի մտանել նախ ի մի յայգուց մերոց,- հուզված պատմում է Աբովյանը:- Կանաչ: Խաղող, ընկու-զենի, գորոց պտուղս որոնեմք: Մանկունք ծանօթք դրացեաց մերոց շրջարկեն զիս, քարեն զինն, հարցանեն հետաքրքրութեամբ՝ զի՞նչ ուսեալ է իմ ի պանդխտութեան և զի՞նչ բերեալ ընդ իս: Նոքա պատմեն ինձ, թէ անդ, ի գեղուջն է այր մի ի Մաղղեբուրգայ, և ածեն զիս ի սենեակ նորա: Խօսին, թէ իմաստուն է նա յոյժ: Ես խօսիմ ընդ նմա. այր մի ծանրատես, փոքրամորուս: Ի սենեկի նստեալ՝ մանկունք բոլորին զմեովք: Նա հարցանէ զվիճակէ Եվրոպիոյ: Ընտանիք նորա հիւանդ: Ես ընթեռնում առ անկողնովն նորա զՆարեկն, նոքա ո՛չ հասկանան, այլ ասեն, թէ այս դիւրութիւն տայ նոցա յոյժ: Նոքա պարկին մերձ լուսամտի: Ես ածիմ առ ընտանիս իմ: Բագում ազգականք առաջնորդեն ինձ: Զառիվայր: Ի հեռաստանէ կանգնի այր <մի> զքամակն առ իս դարձուցեալ, և ինձ ասի, թէ այս ստուեր հօր իմոյ է: Նա ո՛չ շարժի: Ի ցած տուն մի մտեալ՝ խնդրեմ զմայր իմ: Նա գայ: Ես անկեալ զպարանոցաւ նորա լամ՝ խնդրելով զներումն վասն յապաղելոյ իմոյ և խոստանալով այժմ հնազանդ լինել նմա: Նա խօսի յառաջ զայրացմամբ, ապա ողջագորիւ զիս, և ի գիրկս նորա զարթնում» (Աբովյան, №152. Աբովյան, 1961, էջ 307)¹:

Ուշագրավն այն է, որ այս երագում Աբովյանը մագդեբուրգցի անձանորթի ու նրա հիվանդ ընտանիքի համար կարդում է Նարեկ՝ հայերի պաշտելի աղոթամատյանը, որը բժշկելու աստվածային գործություն ուներ: Ու թեև նրանք լեզուն չեն հասկանում, սակայն զգում են բառերի բուժիչ ազդեցությունը: Ինչպես արդեն նշել ենք, Աբովյանն էլ հոր մահվան լուրը ստանալուց հետո օրերով Նարեկ է ընթերցել ու փորձել նրա միջոցով փարատել իր մեծ վիշտը. «Նարեկն մեծ մխիթարութիւն ետ յայսօրիկ աւուրս», - խոստովանել է նա նույն օրագրերում (Աբովյան, №16ա, էջ 203. Աբովյան, 1955, էջ 304):

Երագների տեսակավորման, մոտիվների դասակարգման և շարժառիթների վերաբերյալ իր հայտնի ուսումնասիրություններում, որոնք բազմիցս վերահրատարակվել ու թարգմանվել են տարբեր լեզուներով, նշանավոր հոգեբան Զիգմունդ Ֆրոյդը (1856-1939 թթ.) վերը ներկայացված երագին համարժեք օրինակները դիտում է որպես գործողություն, որը միտված է իրականացնելու մարդու ցանկությունները, մինչդեռ մյուս խմբի երագներն ամեն կերպ փորձում են քողարկել այս տարրը: Ընդ որում՝ ակնհայտ ցանկություններ արտահայտող երագները մաքուր վիճակում գերազանցապես երեխաներին են բնորոշ, թեև դրանք կարող են

¹ Աբովյանի այս ինքնատիպ ստեղծագործությունը գրողի թողոններում հայտնաբերել, վերծանել ու առաջին անգամ հրատարակել է հայագետ Պիոն Հակոբյանը (Հակոբյան Պ., 1955, էջ 86):

տեսնել նաև մեծահասակները: Այս ցանկությունն ունի ծագման երեք հնարավորություն. այն կարող է՝ 1) ծագել ցերեկը և արտաքին հանգամանքների հետևանքով բավարարություն չգտնել, և այս դեպքում գիշերն արտահայտվում է ճանաչված ու չիրականացած ցանկությունը, 2) առաջանալ ցերեկը, սակայն դուրս մղվել. այս դեպքում առկա է չիրականացած, բայց ճնշված ցանկությունը, 3) որևէ վերաբերմունք չունենալ սթափ վիճակին, այլ վերաբերել այն նույն ցանկություններին, որոնք մարդու մեջ արթնանում են միայն գիշերը՝ ճնշված վիճակի հետևանքով (Фрейд, 1991, с. 393-394):

Այս պարզաբանումներից հետո փորձենք որոշ չափով մեկնել Աբովյանի երազի բովանդակությունը: Երազն ամբողջովին նվիրված է երեխային, որն անչափ սիրում է իր հայրենի տունը, մերձավորներին, ընկերներին: Այս սերն արտահայտված է նախևառաջ Աբովյանների նշանավոր այգու և այնտեղ աճող մրգերի, կարելի է ենթադրել՝ նաև այս այգու գույների, ապա՝ ընկերների, իսկ երազի երկրորդ մասում՝ հարազատ մոր և հոր ուրվականի միջոցով: Աբովյանի սիրտը բաժանված է երկու մասի. մեկը Եվրոպայում է, գերազանցապես գերմանալեզու գիտնականներով ու նրանց ընտանիքներով հագեցած միջավայրում, մյուսը հայրենիքում է՝ անհոգ ու երանելի մանկության ընկերների, ազգականների և սիրելի ծնողների շրջապատում:

Չոր մահվան պահին նրա կողքին չգտնվելը խորը ցնցել է Աբովյանին, առաջացրել մեղքի մեծ զգացում. թերևս, ինքը հոր կողքին լինելու պարագայում կարողանար ինչ-որ կերպ կանխել այս պաշտելի մարդու մահը: Սա էլ երազի մեջ այն չիրականացած ցանկություններից մեկն է, որն Աբովյանը փորձում է իրականացնել գերմանական միջավայրում՝ մագդեբուրգցի իմաստուն ծերունու հիվանդ ընտանիքին նրանց համար անհասկանալի, անծանոթ լեզվով (գրաբարով) գրված սրբազան մատյանի՝ Նարեկի օգնությամբ փրկելով: Ընդ որում՝ սա ոչ պակաս անհասկանալի պիտի լիներ նաև հայ միջավայրի համար, բայց ոչ երազում բժշկողի դերում հանդես եկող Աբովյանի, որը գրաբար ոչ միայն գիտեր, այլև այդ լեզվով էր մտածում ու արտահայտում իր նվիրական զգացմունքները:

Այնուամենայնիվ՝ Աբովյանի այս ցանկությունը նոր կատարված ծնվում է նորը: Դորպատում ուսանելու տարիներին ընտանիքից կտրված լինելով՝ Աբովյանն անընդհատ մտովի նրա հետ էր և կարծես յուրովի մեղքի զգացում ունենալով, որ չի կարող լինել հարազատների կողքին, ցանկանում է զոնե երազում ինչ-որ կերպ օգտակար լինել մորը: Նա վախեցած է, որ հոր անշարժ ստվերը մորն էլ իր հետևից կտանի այն աշխարհ և կանխում է դա՝ խնդրելով ներել իրեն, հասկանալի է, թե ինչու.

«Ես անկեալ զպարանոցաւ նորա լամ՝ խնդրելով զներումն վասն յապա-
ղելոյ իմոյ և խոստանալով այժմ հնազանդ լինել նմա»¹:

Երազի մի հետաքրքիր նմուշ էլ արձանագրված է գրողի «Դոր-
պատյան օրագրերում», որ պատահել է ավելի վաղ՝ 1831 թ. դեկտեմբերի
14-ի լույս 15-ի գիշերը: Երագում տեսնում է իրեն՝ Հայաստանի եկեղեցի-
ներից մեկում քարոզելիս: Հանկարծ հայտնվում է սիրելի ուսուցիչն ու
դաստիարակը՝ Ֆրիդրիխ Պարրոտը: Տեսնելով նրան՝ պատկառանքից
լռում է, «Այլ նա իսկոյն խրախուսէ զիս, - գրում է Աբովյանը, - «Ուսուցէ՛ք
զմանկունս Հայոց, ուսուցէ՛ք, ընդէ՛ր լռէք» . քաղցր դէմք նորա քաջալերէ
զիս առ այն» (Աբովյան, №16, էջ 54. Աբովյան, 1955, էջ 65):

Պատահական չէ, որ երագում Աբովյանը քարոզում է: Դեռ մանկուց
ծնողները փոքրիկ Խաչատուրին նվիրաբերել էին Տիրոջն ու Էջմիածնի
վանքին, և նրան վերապահված էր ապագայում իր գործունեությունը ծա-
վալել հոգևոր ասպարեզում: Ժամանակին այդպես էին կարծում շատերը,
այդ հավատն էր ընծայում նաև Հայկական մարզի վերջին կառավարիչ,
գնդապետ Գևորգ Սմբատյանը: Ներսէս Աշտարակեցուն Դորպատից Քի-
շինն ուղարկած մի նամակում (1834 թ. հունիսի 10) Աբովյանը հիշում է,
թե ինչպես հեռավոր 1826 թ. փետրվարին Ներսիսյան դպրոցի ավար-
տական հանդեսի ժամանակ արտասանած իր բանաստեղծությունից²
ոգևորված՝ պարոն Սմբատյանը հարց ուղղեց Ներսէս Աշտարակեցուն.
«Ե՞րբ լիցի տիրացու Խաչատուրն եպիսկոպոս քաղաքին մերոյ» (այսինքն՝
Տփղիսի. - Ա. Հ.), որին իմաստուն հոգևորականը տվեց շատ խորհրդա-
վոր պատասխան. «Այսօր կարէ նա լինել այդ, այլ զոր ուսանի ի բագում
ամս, պարտ է աշխատել վասն» (Աբովյան, №188, էջ 2. Աբովյան, 1961, էջ
154):

Այո՛, հանուն ինչ նպատակի, որ սովորում էր, բազմամյա աշխատանք
էր պահանջում: Եվ նա աշխատեց շնորհիվ իր նախանձելի ընդունակու-
թյունների և նպատակասլացության, փայլուն կրթություն ստացավ ժա-
մանակի ամենաառաջադեմ ուսումնական հաստատություններից մե-
կում՝ Դորպատի կայսերական համալսարանում, այնուհետև զինված ան-
հրաժեշտ զիտելիքներով՝ վերադարձավ հայրենիք՝ ծավալելով նախա-
դեպը չունեցող լուսավորական մեծ գործունեություն: Ուստի միանգա-

¹ Այս երազի հեռավոր արձագանքն է Աբովյանի «Պատմութիւն Տիգրանի» անավարտ վեպի
փոքրիկ հերոսուհու՝ Եղիսաբեթի երազը (Աբովյան, 1947, էջ 136-137):

² Խոսքը Ներսէս Աշտարակեցուն նվիրված «Նախկին քոց քրտանց տօն այսօր հնչէ...»
ներբողի մասին է: Պատանի Աբովյանը բանաստեղծությունը կառուցել է այնպես, որ
առանձին բառերի սկզբում ու մեջտեղում ընդգծված տառերից կազմվի **ՆԵՐՍԷՍ** անունը
(հեղինակային ինքնագիրը տե՛ս Աբովյան, №87, էջ 2. հմմտ. Աբովյան, 1948, էջ 26, տողեր
53-64): Հատորի հրատարակիչները թյուրիմացաբար այն միացրել են «Անդրիական
կենաց արձան կանգնեցար...» բանաստեղծությանը՝ համարելով նրա շարունակու-
թյունը:

մայն բնական է նաև երազի երկրորդ մասում իր հույզերի ու նպատակների հավերժ վկա ուսուցչի՝ Ֆրիդրիխ Պարրոտի հայտնվելը, որն Աբովյանի համար իդեալական մարդու և մանկավարժի եզակի օրինակ էր:

Պարրոտը համոզված էր, որ իր սանը մեծ առաքելություն ունի իր հայրենիքի ու ժողովրդի առջև: «Անմոռաց և յաւիտենական եղիցին երախտիք ձեր ի վերայ ազգի ձերոյ,- մի առիթով նա ասել էր Աբովյանին,- ...Ձազգ մի լուսաւորել նախանձելի է, քան զամենայն, և անմոռանալի դարուց ի դարս» (Աբովյան, №16, էջ 119-120. Աբովյան, 1955, էջ 135): Անցան տարիներ, և իրոք մարգարեական եղան այդ հազվագյուտ մտավորականի խոսքերը:

Աբովյանի երազներից մեկի բեկորն էլ պահպանվել է նրա նամակներից մեկում՝ գրված Երևանում, 1847 թ. դեկտեմբերի 24-ին և ուղղված իր սիրելի աշակերտներ Գևորգ Գեղամյանին (1831-1858 թթ.) ու Գերգի Շահնազարյանին (1833-1893 թթ.). երկուսն էլ կրթությունը շարունակում էին Տիֆլիսի գիմնազիայում: «Շաբաթ մի հիւանդ էի,- գրում է Աբովյանը,- ի գիշերի միում սակաւ մնաց յիս կենդանութիւն. որպէ՛ս փափագէի տեսութեան ձերում: Յերազի տեսի զձեզ և օրհնեցի...» (Աբովյան, №182, էջ 4. Աբովյան, 1961, էջ 291):

Ճիշտ է, այս երազը շարունակական սյուժե չունի, ինչպես նախորդները, և ժամանակագրորեն էլ նրանցից բաժանված է շուրջ տասնհինգ տարով, սակայն այդ մի քանի բառն էլ բավական են փոխանցելու Աբովյանին համակած տրամադրությունները, որոնք կարծես նախորդ երազի շարունակությունը լինեն: Աբովյանն իր աշակերտներին համարում էր իր սեփական զավակները և ինչպես հոգատար հայր՝ մտահոգված իր սաների ապագայով, մեծ պատասխանատվություն էր զգում նրանցից յուրաքանչյուրի հանդեպ, նույնիսկ այն բանից հետո, երբ նրանք ավարտում էին դպրոցը:

Աբովյանը յուրահատուկ մանկավարժ էր. նրա համար սկզբունքային խնդիր էր, որ իր սաները հիմնավոր կրթություն ստանան և շնորհիվ դրա հնարավորություն ունենան ուսումը շարունակելու երկրի լավագույն բուհերում, պատրաստվեն որպես լուրջ, պահանջված մասնագետներ ու վերադառնան հայրենիք՝ կերտելու նոր Հայաստանը: Այդ մշտական հոգացություններն արձանագրված են նրա բազմաթիվ նամակներում ու զանազան վավերագրերում¹, և, ինչպես տեսնում ենք, իրենց արտացոլումն են գտել նաև երազում:

Այս երազում Աբովյանը հայրաբար օրհնում է իր երկու աշակերտներին: Պահպանված վավերագրերից տեղեկանում ենք, որ Գևորգ Գե-

¹ Այս խնդրին մանրամասն անդրադարձել ենք մեր «Աբովյանն ու իր աշակերտները նրա կյանքի և գործունեության երևանյան շրջանում» հոդվածում (Հակոբյան Ա., 2013, էջ 126-133):

դամյանին նա ցանկացել է ուղարկել Պետերբուրգի համալսարան, իսկ Գեորգի Շահնազարյանին՝ Մոսկվայի Լազարյան ճեմարան, բայց հանգամանքների բերումով՝ այդ մտադրությունը չի իրականացել: Մի քանի տարի անց (1851 թ.), երբ Աբովյանն այլևս կենդանի չէր, Գեղամյանն ընդունվում է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը և գերազանց գնահատականներով ավարտում 1857 թ.՝ պատրաստվելով պաշտպանել նաև թեկնածուական ատենախոսությունը: Թեև Շահնազարյանի հետագա կրթության մասին սկզբնաղբյուրները լռում են, սակայն վավերագրերից հայտնի է, որ նա էլ զանազան կարևոր պաշտոններ է վարել երկրամասի մի շարք պետական աստիճաններում: Այսպես Աբովյան ուսուցչի սաները, որպես սեփական երկրի արժանի զավակներ, հետզհետե կազմավորեցին Հայաստան աշխարհի նոր տիպի մտավորականության առաջին սերունդը:

Դեռ ուսանողական տարիներին Աբովյանի ուշադրությունն էր գրավել Լայպցիգի պարբերականներից մեկում տպագրված մի հոդված, որտեղ ներկայացված էին Շվեդիայի թագավոր Կարլ Յոհան XIV-ի (1763-1844 թթ.) հայացքները դաստիարակության, բարոյականության, հայրենիքի հանդեպ սիրո և պատասխանատվության ու դրանց առնչվող այլևայլ խնդիրների վերաբերյալ, նաև թագավորի նամակներից մեկը՝ ուղղված իր որդու՝ թագաժառանգ Օսկարի դաստիարակին: Ուշագրավ հատվածներն Աբովյանն արտագրել, ապա թարգմանաբար զետեղել էր իր օրագրերում: Ահա դրանցից մեկը. «Դաստիարակությունը ավարտում է բնության գործը, նա զարգացնում է այն ծիլերը, որոնցից առաջ են գալիս հերոսները, օրենսդիրները, խոշոր գիտնականները. նա է մղում երիտասարդության ձգտումները դեպի այն ամենը, ինչ արդարացի է և ազնիվ, վեհ և վսեմ՝ դեպի կրոնը, բարոյականությունը և գիտությունը: Մյուսն է մարդկային դաստիարակության խոշորագույն խթանները» (Աբովյան, №16, էջ 42. Աբովյան, 1955, էջ 52. Blätter, 1829, S. 301): Այս տողերն ընթերցելիս հասկանալի է դառնում, թե դրանք որքան ներդաշնակ են գրողի սեփական հայեցողությունների հետ, որքան համահունչ նրա մեջ աստիճանաբար հասունացող ու արմատավորվող գաղափարներին:

Երազի թեմատիկան Աբովյանի ստեղծագործության մեջ հանդես է գալիս նաև այլ ժանրի երկերում: Իր կյանքի վերջին տարիներին (1845-47 թթ.) գրված «Կարճատոտ պատմությունների» երկրորդ շարքում հեղինակը զետեղել է երկու պատում՝ «Կարլուսի Մեծի ջախելության սերը» և «Երազը» (Աբովյան, №9, էջ 29-35. Աբովյան, 1947, էջ 106-110): Երկուսն էլ փոխադրվել են վաղ Վերածննդի դարաշրջանի իտալացի նշանավոր բանաստեղծ Ֆրանչեսկո Պետրարկայի (1304-1374 թթ.) լատիներեն նամականու մեջ ընդգրկված զրույցներից (Petrarca, 1859; Petrarca, 1862; Petrarca,

1863)¹: Առաջինը տեղային բնույթի մի գեղեցիկ լեզենդ է Ախեն քաղաքի հիմնադրման մասին (որում, ի դեպ, ևս առկա է երազի մոտիվը, բայց մղված է սյուժեի երկրորդ պլան), մյուսը Պետրարկայի երազների վերապատումն է: Հարկ է նշել, որ Պետրարկայի անձն ու գործունեությունը Աբովյանին հետաքրքրել են դեռևս ուսանողական տարիներից՝ իր կյանքի այն ժամանակահատվածում, երբ եվրոպական մի շարք լեզուների (գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, իսպաներեն) հետ մեկտեղ յուրացնում է նաև լատիներենն ու հնարավորություն ստանում ծանոթանալու հանճարեղ իտալացու երկերին նաև բնագրերով²: Հետագայում Պետրարկայի անունը հանդես է գալիս գրողի այնպիսի առանցքային ստեղծագործություններում, ինչպիսիք են «Վերք Հայաստանին» և «Աղասու խաղը»:

Իր վերոհիշյալ պատմվածաշարի համար Աբովյանն ընտրել է Պետրարկայի երազներից միայն երեքը, որոնք արտահայտում են իտալացի մեծ հումանիստի խառնվածքի մեկ այլ դրսևորում: Պարզվում է՝ Պետրարկան նաև օժտված է եղել զարմանալի ներքնատեսությամբ և հաճախ իր մտերիմների հետ հաղորդակցվել է երազների միջոցով: Իր արտասովոր ձիրքի շնորհիվ նա կարողացել է նույնիսկ մահվան ճիրաններից փրկել ընկերոջը, իսկ մի երազում էլ՝ մեծ հեռավորության վրա զգալ մյուսի մահը: «Ոչ թե ցավն էր, որ բարեկամս առաջս բերեց, ոչ թե մեկը, որ մեռավ, մյուսը, որ կյանք ստացավ, չէ՛: Ինչ, որ երկու անգամն էլ ցանկանում կամ վախենում էի, որ տեսնիմ, առաջս էկան», - Աբովյանի միջոցով ասում է Պետրարկան (Աբովյան, 1947, էջ 108):

Աբովյանի ստեղծագործության մեջ երազի մոտիվը հանդես է գալիս նաև որպես գեղարվեստական ատաղձ: Այս առումով նախևառաջ հարկ է անդրադարձ կատարել նրա «Երևակայութիւն ի վերայ ճանապարհորդութեան ի լեառն Արարատ» ծավալուն, բայց շատ ինքնատիպ բանաստեղծությանը, որի նախնական տարբերակը (բաղկացած 28 տնից) գրվել է արարատյան վերելքից կարճ ժամանակ անց՝ 1829 թ. աշնանը, սակայն տարիներ հետո արդեն Դորպատում հեղինակն այն վերամշակել ու համալրել է 8 նոր քառատողով՝ պատրաստվելով թարգմանաբար տպագրել գերմանական մամուլում (Աբովյան, №97, էջ 1-4. Աբովյան, 1961, էջ 178-184): Պատճառը շատերի, այդ թվում՝ եվրոպացիների անիրավացի կասկածն էր Պարրոտի՝ Արարատի գագաթը բարձրանալու իսկության վերաբերյալ, ուստի Աբովյանը ցանկանում էր իր գրաբար բանաստեղ-

¹ Ժողովածուն բաղկացած է 24 գրքից, որտեղ ընդգրկված է 350 նամակ՝ գրված 1325-1361 թթ. ընթացքում:

² Ի տարբերություն չափածո ստեղծագործությունների՝ Պետրարկան իր արձակ կտավի երկերը գրել է բացառապես լատիներենով:

ծության թարգմանությունը տպագրել Գերմանիայում՝ «առ ի լուծանել զայս տարակուսութիւն»:

Հանդարտ եղանակին սկսվում է հերոսի վերելքն Արարատի լանջով դեպի վեր: Նրան առաջ է մղում աշխարհի և բնության զաղտնիքների մեջ խորամուխ լինելու մեծ ցանկությունը: Սակայն ճանապարհի կեսին սկսվում է փոթորիկը, որն աստիճանաբար ավելի ու ավելի է սաստկանում՝ ստիպելով նրան պատսպարվել ձյան բլուրներից մեկի թիկունքում: Ինչպես վաղմիջնադարյան լեգենդներին հատուկ շատ պլոմբներում՝ այստեղ ևս հերոսն ընկնում է նիրհի մեջ ու երագում տեսնում, թե ինչպես են ոգեղեն էակներն իջնում երկնքից ու իրեն տանում Մասիսի գագաթը:

*Աստեն մակարդակք առաստաղք երկնից ցելեալք յերկուսի,
Բջին ընդ ամպովք, հոգիք անմարմին երկնաբնակ խմբի.
Առեալ զանշշունջ դի ոսկերտտեացս ի վախի աստի,
Ածեն ի թատրոն երկծայր գագաթան Մասսեաց կատարի...*
(Աբովյան, 1961, էջ 180):

Լեռան գագաթին հերոսին դիմավորում է մի ալեգարդ ծերունի, որը, ինչպես պարզվում է քերթվածի հետագա տողերից, Նոյ նահապետն է: Իր հեռավոր ժառանգին նա պատմում է իր հարազատ բնակավայրի ու մերձավորների մասին, լեռան բարձունքից մատնացույց անում Արկուրին ու Մարանդը՝ մտահոգված նրանց հետագա ճակատագրով: Ծանոթ չլինելով քրիստոնեության խորհրդանիշին՝ խաչին, Նոյը տարակուսած հարցնում է, թե այն ի՞նչ քառաթև փայտի կտոր է, որից ճառագող լույսը տարածվում է ողջ լեռան վրա, չէ՞ որ դա իր տապանի փայտից չէ:

Աբովյանը, բանաստեղծության պլոմետային կառուցվածքի մեջ ներմուծելով այս դրվագը, ցանկացել է մեկ անգամ ևս շեշտել այն պատմական փաստը, որ 1829 թ. սեպտեմբերի 27-ին ինքն ու Պարրոտը հաղթահարեցին Արարատի՝ մինչ այդ անմատչելի կատարը ու այնտեղ տեղադրեցին մի խաչ, այդ քայլով նաև խորհրդանշելով, որ այսուհետև մեր հայրենիքն ու սրբազան լեռը գտնվում են քրիստոնյա պետության և Աստծու հովանու ներքո: Այդուհանդերձ՝ ստեղծագործությունն ընթերցելիս՝ լավատեսական երանգներին զուգահեռ, մշտապես զգալի են հայրենի երկրի և ժողովրդի ապագայի վերաբերյալ հեղինակի մտահոգությունն ու մտավախությունները: Եվ իրոք, ժամանակը ցույց տվեց, որ դրանք անհիմն չէին:

Քննարկվող թեմայի համար առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Աբովյանի «Մուտ ի Հայրենիս» բանաստեղծությունը (Աբովյան, №58, էջ 111-117. Աբովյան, 1948, էջ 242-244)¹, որը գրվել է 1844 թ. մայիսի

¹ Բանաստեղծությունից մի քանի հատված նախապես տպագրվել է (Տեր-Կարապետյան, 1897, էջ 5, 97-98):

սկզբներին, երբ Աբովյանը Տփղիսից Հայաստան էր ուղեկցում գիտական ուսումնասիրություններ կատարելու նպատակով մեր երկիր այցելած գերմանացի երկրաբան, Դորպատի համալսարանի պրոֆեսոր Հերման Աբիխին և ճանապարհին կանգ է առնում հայրական տանը՝ Քանաքեռում:

Աբովյանի միջապոետիկական ընկալումներն այս ստեղծագործության մեջ զուգահեռվում են Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» հետ: Այն, որ Աբովյանը քաջատեղյակ էր Ագաթանգեղոսի երկին, հայտնի է մասնավորապես Աբովյանի՝ Ֆրիդրիխ Պարրոտին արած հաղորդումներից (Աբովյան, 1955, էջ 114. Աբովյան, 1956, էջ 23-24, 259-260, 475, 477), գրողի «կիկյան» ձեռագրից¹, որ պատրաստվել է պատմաբան Անդրեյ Մուրավյովի խնդրանքով, վերջապես՝ նրա մի շարք չափաձո և արձակ երկերից²: Ահա վկայակոչված բանաստեղծության հինգերորդ քառյակը.

*Երազք և անուրջք՝ տեսիլք և իմ միտք
Քո չէին միթե մինչև ցարդ հովիտք,
Քո անոյշ լերինք, քո դաշտք երկնանմանք,
Որ բուռն սիրով մաշիւր իմ սիրտ միշտ*
(Աբովյան, 1948, էջ 242)³:

Աբովյանը վերևում օգտագործում է «տեսիլք» բառը, իսկ ապա՝ հայրենի դաշտերը *երկնանման* տեսնում: Զարմանալիորեն այս տողերը հարազատ են Գրիգոր Լուսավորչի տեսիլքի այն հատվածին, որտեղ երկինքը պատմվում է, և երկրից վեր նայողին հանկարծ բացվում են երկնային լեռները, ջրերն ու դաշտերը, որոնց նմանակն է երկրային բնապատկերը: «Եւ իմ նայեցեալ՝ տեսի բացեալ զհաստատութիւն երկնից, և զջուրսն որ ի վերայ նորա՝ ըստ հաստատութեանն պատառելոյ, զի ըստ նմանութեան ձորաց իբրև զկատարս լեռանց՝ յայս կոյս յայն կոյս բաժանեալ դիզեալ կային անբաւութիւնք անկշռելիութեան ական տեսանելոյ: Եւ լոյսն հոսեալ վերուստ ի վայր մինչև յերկիր հասաներ...» (Ագաթանգեղոս, 1909, §734, էջ 383):

Կարելի է եզրակացնել, որ Աբովյանն իր միջապոետիկական ընկալումներով, մասնավորապես այս ստեղծագործության հիշյալ տողերի միջոցով, մի յուրահատուկ կամուրջ է ստեղծում նոր ժամանակների և վաղ

¹ Հին Հայաստանի մայրաքաղաքներին նվիրված Աբովյանի ռուսերեն պատմական ակնարկներից պահպանվել է ընդամենը մեկ ինքնագիր տետրակ, որ գտնվում է Ուկրաինայի Գիտությունների ակադեմիայի Հանրային գրադարանում (Հայկական ժողովածու №427, թ. 1-12): Այդ հազվագյուտ ձեռագրի մասին առավել մանրամասն տե՛ս Հակոբյան Պ., 1962, էջ 49-64:

² «Աղասու խաղը», «Վերք Հայաստանի», «Առ բարեսնունդ և սիրելի աշակերտս իմ», «Поездка к развалинам Ани», «Die Kurden und Jesiden» և այլն:

³ Ընդգծումները մերն են. – Ա. Հ.:

միջնադարի հայ մշակույթների միջև: Ավելին, նա իր հայրենիքը տեսնում և ընկալում է այնպես, ինչպես մեր պատմիչները, մի բան, որ խոսում է հայ մշակույթի ուժեղ ժառանգականության և շարունակականության մասին: Եվ միանգամայն բնական է, որ Աբովյանն այս երկի մեջ հիշատակում է նաև հայոց ինքնության ամենակարկառուն խորհրդանիշը՝ Մասիս սարը.

*Փա՛ռքդ Հայաստանի, գերամբա՛րձ Մասիս.
Համայն դու ազգաց ուխտի սուրբ արձան
(Աբովյան, 1948, էջ 244):*

Քաջատեղյակ լինելով իր ժողովրդի պատմությանն ու մշակույթին և բարձր գնահատելով նրա գրավոր ու բանավոր ժառանգությունը՝ Աբովյանն իր մի շարք քերթվածների մեջ ներմուծում է բանահյուսական ինքնատիպ նմուշներ: Հայոց շինարարական հանճարի գլուխգործոց Գեղարդավանքին նվիրված «Մենաստան սուրբ Գեղարդայ վանից» բանաստեղծության մեջ (Աբովյան, №58, էջ 81-94. Աբովյան, 1948, էջ 222-227) հեղինակը բուն սյուժեին վարպետորեն միահյուսում է Գեղարդավանքը կառուցող քույր ու եղբոր մասին ժողովրդական ավանդությունը, որի հիմքում դարձյալ ընկած է աստվածային տեսիլքի մոտիվը¹: Երկար ժամանակ չկողմնորոշվելով, թե որտեղ պետք է կանգնեցվի շինությունը, երիտասարդն աղերսում է Աստծուն՝ ցույց տալ այդ տեղը, և երագում տեսնում է իր կռանն այն ապառաժի ծայրին, որից ինքն ու քույրը միասին կերտելու էին սրբազան տաճարը.

*«Բորբոր սիրոյն երկնանախանձ»,
Այսպէս ճառէ՛ր ամկալեգուն,
«Զսրբազանն վառեալ զկայծ
Ի սիրտ եղբօրն և քեռ սիրուն»...*

*Եւ երկնայնոց նուազ օրհնառաք՝
Խառն ընդ լուսոյն արեգին վառ՝
Հեղոյր ի սիրտ նոցա պապակ
Վերնոյն զշնորհ կենդանարար...*

(Աբովյան, 1948, էջ 224-225):

Այնուհանդերձ՝ երկն իր էությամբ հեղինակի կոչն է հայությանը, որը չի մտահոգվում տաճարի նախկին փառքն ու հզորությունը վերականգ-

¹ Բանաստեղծությանը հեղինակը կցել է նաև հինգ ծանոթագրություն, որտեղ վերապատմում է վանքի հիմնադրման և նրա հրաշագործությունների մասին ազգային ավանդությունները, անդրադառնում Գառնի ամրոցի ավերակներին:

նելու մասին՝ ի դեմս Գեղարդավանքի նկատի ունենալով Հայաստան աշխարհը:

Նույն կերպ իր «Էջմիածին» քերթվածում¹ Աբովյանն օգտագործում է Լուսավորչի երազը. սաստիկ որոտից երկինքը դղրդում է, երկփեղկվում, և աստվածային լույսը վերնից հոսում է ներքև՝ լուսավորելով երկիրը, և տեսանելի է դառնում հրեղեն թներով մարդանման էակների երկնային զորքը:

*Երկինք աստ դղրդան, երկիր փախս առեալ՝
Յահի, ի դողման ոլորտք որոտան.
Լոյսն փայլակնաձև քառաթև ցայտեալ՝
Ի խոր գիշերի, ի քուն թանձրութեան
Ճաճանչ ոսկեփայլ ի մեր դաշտ ծագեալ,
Զմռայլ աղջամուղջ ի լոյս տունջեան
Երկնահրաշ տեսեամք աստ յեղափոխեալ
Հրեշտակին թևովք Գրիգորեան երագ...
(Հակոբյան, 1997, էջ 165):*

Սակայն բանաստեղծությունը Լուսավորչի տեսիլքի լոկ գեղարվեստական վերաշարադրանքը չէ: Այն իր բովանդակությամբ և արծարծած խնդիրներով շատ ավելի խորն է՝ ինքնատիպ ձևով ներկայացնելով Հայաստանի ապագայի վերաբերյալ Աբովյանի լուսավորական ծրագրերն ու գաղափարները: Պատահական չէ, որ հեղինակն իր խոսքն ուղղում է հայության պաշտելի սրբավայրին՝ Էջմիածնին. դարեր շարունակ նա է եղել հայ ժողովրդի հարատևության ու կենսունակության խորհրդանիշը, և այստեղից պետք է սկսվի երկրի ու ազգի նոր վերածնունդը:

Դեռևս Հին Արևելքում բանավոր ստեղծագործության ավանդական սյուժեն նույն հասարակության մեջ ժամանակ անց վերածվում էր յուրահատուկ կառուցվածքային կաղապարի, որի վրա էլ կառուցվում է նոր բովանդակություն: Սա հատուկ է նաև վաղմիջնադարյան հայ գրականությանը, որը հին հեթանոսական նյութից օգտվել է նման եղանակով (Հակոբյան Հ., 2000, էջ 30): Այս միտքը կիրառելի է նաև Աբովյանի վերը բերված չափածո ստեղծագործությունների պարագայում. դժվար թե նա զգացել է սյուժեների պակաս ու որոշել է կրկնություն կատարել: Ընդհակառակը՝ վերցնելով այդ ատաղձները՝ Աբովյանը դրանք զարգացրել ու հարստացրել է միանգամայն նոր բովանդակությամբ:

Ինչպես տեսանք ներկայացված օրինակների միջոցով, Աբովյանի ստեղծագործության մեջ երազի թեմատիկան հանդես է գալիս իր ամե-

¹ «Էջմիածին» բանաստեղծության հեղինակային բնագրի ամբողջական, ճշտված վերարտադրությունը տե՛ս Հակոբյան Պ., 1987, էջ 102-107, նաև՝ Հակոբյան Պ., 1997, էջ 164-171:

նատարբեր դրսևորումներով: Մի դեպքում դրանք կյանքի տարբեր ժամանակահատվածներում Աբովյանի տեսած անձնական երազներն են, որոնց համար ազդակ են ծառայել տարբեր գործոններ և անգամ նրան ստիպել թղթին հանձնել դրանցից մի քանիսի հակիրճ բովանդակությունը: Այս խմբի մեջ կարելի է ընդգրկել նաև միջնադարյան հանրահռչակ գրող և բանաստեղծ Ֆրանչեսկո Պետրարկայի երազները, որոնք, թաքնված լինելով նրա ծովածավալ նամակների էջերում, չեն վրիպել Աբովյանի ուշադրությունից ու դեռևս 1840-ական թթ. փոխադրվելով աշխարհաբար՝ այդպիսով մուտք են գործել հայ իրականություն:

Վերևում դիտարկված երազների մյուս խումբն Աբովյանի գերազանցապես չափածո երկերն են, որտեղ երազը, ծառայելով իբրև գեղարվեստական ատաղձ, կա՛մ հանդես է գալիս որպես հեղինակի ստեղծագործական մտքի հորինվածք, կա՛մ որպես ազգային ավանդական սյուժեի տարր միահյուսվում նրա ինքնուրույն երկերի կառուցվածքին՝ դրանց, սակայն, հաղորդելով միանգամայն նոր հնչեղություն ու նոր բովանդակություն և իր իսկ ստեղծած միֆապոետիկական պատկերների միջոցով վկայելով հայ մշակույթի ուժեղ ժառանգականության ու շարունակականության մասին:

Այս ամենով հանդերձ՝ Աբովյանի երազները նրա հարուստ ու առաքինի ներաշխարհի շարունակությունն են, և որքան էլ այնտեղ իշխեն անգիտակցականը (անձնական երազներում) կամ գիտակցականը (գեղարվեստական երկերում), միևնույնն է, դրանք համակված են հայրենիքի նկատմամբ մեծ սիրով և նրան հնարավորինս պիտանի լինելու բուռն ցանկությամբ:

Գրականության ցանկ

1. *Աբովյան Խ.*, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. IV, Ե., 1947:
2. *Աբովյան Խ.*, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. I, Ե., 1948:
3. *Աբովյան Խ.*, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. VI, Ե., 1955:
4. *Աբովյան Խ.*, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. VII, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1956:
5. *Աբովյան Խ.*, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. X, Երևան, 1961:
6. *Ազաթանգեղայ Պատմություն* Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909:
7. *Հակոբյան Պ.*, Անձանոթ էջեր Խաչատուր Աբովյանի կյանքից ու գործունեությունից // Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ, Հասարակական գիտություններ, 1955, №10, էջ 69-87:
8. *Հակոբյան Պ.*, Աբովյանի Կիևյան ձեռագիրը // Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ, Հասարակական գիտություններ, 1962, №9, էջ 49-64:
9. *Հակոբյան Պ.*, «Նախաշավիղի» կորած էջերից // «Բանբեր Երևանի համալսարանի», 1987, №3, էջ 86-107:
10. *Հակոբյան Պ.*, Խաչատուր Աբովյանի կենսագրության առեղծվածները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997, 486 էջ:

11. *Հակոբյան Հ.*, Գրիգոր Լուսավորչի լեզունի հինարևելյան և միջերկրածովյան զուգահեռները // Հայաստանը և քրիստոնյա Արևելքը, Ե., 2000, էջ 27-43:
12. *Հակոբյան Ս.*, Արքայանն ու իր աշակերտները նրա կյանքի և գործունեության երևանյան շրջանում // «Գարուն», 2013, №3-4, էջ 126-133:
13. *Տեր-Շարապետյան Ն.*, Խաչատուր Արքայան, Տփլիս, 1897, 138 էջ:
14. **Аристотель.** О сновидениях / пер. О. А. Чулкова // Академия. Материалы и исследования по истории Платонизма, Выпуск 6, СПб.: Изд-во С.-Петербургского университета, 2005, 484 стр.
15. **Фрейд З.**, Толкование сновидений, Ереван, 1991, 448+IX стр.
16. Blätter für literarische Unterhaltung für das Jahre 1829. Erster Band, Januar-Juni, Leipzig, 1829, 604 S.
17. **Francisci Petrarcae** Epistolae de rebus familiaribus et variae, Studio et cura Iosephi Francassetti, Volumen Primum, Florentiae: Typis Felicis Le Monnier, 1859, CLVI + 460 p.
18. **Francisci Petrarcae** Epistolae de rebus familiaribus et variae, Studio et cura Iosephi Francassetti, Volumen Secundum, Florentiae: Typis Felicis Le Monnier, 1862, 576 p.
19. **Francisci Petrarcae** Epistolae de rebus familiaribus et variae, Studio et cura Iosephi Francassetti, Volumen Tertium, Florentiae: Typis Felicis Le Monnier, 1863, 548 p.

Արխիվային նյութեր

1. *Արքայան, №9* - Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Խ. Արքայանի արխիվ, №9, 36 էջ:
2. *Արքայան, №16* - ԳԱԹ, Խ. Արքայանի արխիվ, №16, 151 էջ:
3. *Արքայան, №16ա* - ԳԱԹ, Խ. Արքայանի արխիվ, №16ա, 204 էջ:
4. *Արքայան, №58* - ԳԱԹ, Խ. Արքայանի արխիվ, №58, 128 էջ:
5. *Արքայան, №87* - ԳԱԹ, Խ. Արքայանի արխիվ, №87, 2 էջ:
6. *Արքայան, №97* - ԳԱԹ, Խ. Արքայանի արխիվ, №97, 4 էջ:
7. *Արքայան, №152* - ԳԱԹ, Խ. Արքայանի արխիվ, №152, 1 էջ:
8. *Արքայան, №182* - ԳԱԹ, Խ. Արքայանի արխիվ, №182, 4 էջ:
9. *Արքայան, №188* - ԳԱԹ, Խ. Արքայանի արխիվ, №188, 8 էջ:
10. *Հայկական ժողովածու №427* - Ուկրաինայի Գիտությունների ակադեմիայի Հանրային գրադարան, Ջեռագրերի բաժին, Կիևի Հոգևոր ակադեմիայի հավաքածու, №427 («Հայկական ժողովածու»), 24 էջ:

References

1. **Abovyan Kh.**, Erkeri liakatar zhoghovatsu tasy hatorov, IV hator / The Complete Works in Ten Volumes, Vol. IV, Yerevan, Armenian SSR AS Publishing, 1947, 386 pages (In Armenian).
2. **Abovyan Kh.**, Erkeri liakatar zhoghovatsu tasy hatorov, I hator / The Complete Works in Ten Volumes, Vol. I, Yerevan, Armenian SSR AS Publishing, 1948, 418 pages (In Armenian).
3. **Abovyan Kh.**, Erkeri liakatar zhoghovatsu tasy hatorov, VI hator / The Complete Works in Ten Volumes, Vol. VI, Yerevan, Armenian SSR AS Publishing, 1955, 340 pages (In Armenian).
4. **Abovyan Kh.**, Erkeri liakatar zhoghovatsu tasy hatorov, VII hator / The Complete Works in Ten Volumes, Vol. VII, Yerevan, Armenian SSR AS Publishing, 1956, 526 pages (In Armenian).
5. **Abovyan Kh.**, Erkeri liakatar zhoghovatsu tasy hatorov, X hator / The Complete Works in Ten Volumes, Vol. X, Yerevan, Armenian SSR AS Publishing, 1961, 460 pages (In Armenian).
6. Agathangeha Patmutyun Hayoc / History of the Armenians, Text Preparation by G. Ter-Mikirtchian and St. Kanayants, Tiflis, 1909, 70+474+29 pages (In Armenian).

7. **Aristotel'**, O snowideniyakh / About Dreams. Translation by O. A. Chulkov // Academy. Materials and research on the history of Platonism, Issue 6, SPb., St. Petersburg University Press, 2005, 484 pages (In Russian).
8. **Freid Z.**, Tolkovanie snovidenij / Interpretation of Dreams, Yerevan, 1991, 448+IX pages (In Russian).
9. **Hakobyan P.**, Antsanot ejer Khachatur Abovyani kjanqic u gortsuneutyunic / Unknown pages from the life and activity of Khachatur Abovyan // Proceedings of the Academy of Sciences of the Armenian SSR, Social Sciences, Yerevan, 1955, №10, p. 69-87 (In Armenian).
10. **Hakobyan P.**, Abovyani Kievyan dzeragiry / Abovyan's Kyiv manuscript // Proceedings of the Academy of Sciences of the Armenian SSR, Social Sciences, Yerevan, 1962, №9, p. 49-64 (In Armenian).
11. **Hakobyan P.**, "Nakhashavighi" korats ejeric / From the lost pages of "Introduction to education" // Bulletin of the Yerevan University, Yerevan, 1987, №3, p. 86-107 (In Armenian).
12. **Hakobyan P.**, Khachatur Abovyani kensagrutyan areghtsatsnery / Mysteries of the biography of Khachatur Abovyan, Mother See of Holy Etchmiadzin, 1997, 486 pages (In Armenian).
13. **Hakobyan H.**, Grigor Lusavorchi legendi hinarevelyan ev mijerktratsovyan zugahernery / Ancient Eastern and Mediterranean parallels of the Legend of Gregory the Illuminator // Armenia and Christian Orient, Yerevan, 2000, p. 27-43 (In Armenian).
14. **Hakobyan A.**, Abovyann u ir ashakertnery nra kjanqi ev gortsuneutyan Erevanyan shrjanum / Abovyan and his students in Yerevan period of his life and activity // Garun, Yerevan, 2013, №3-4, p. 126-133 (In Armenian).
15. **Ter-Karapetyan N.**, Khachatur Abovyan, Tiflis, 1897, 138 pages (In Armenian).

Archival materials

1. *Abovyan, №9* – Eghishe Charenci anvan Grakanutyan ev arvesti tangaran (ajshuhetev - GAT), Khachatur Abovyani archiv / State Museum of Literature and Art after Yeghishe Charents, Yerevan (henceforth SMLA), Khachatur Abovyan's Collection, №9, 36 pages.
2. *Abovyan, №16* - GAT, Khachatur Abovyani archiv / SMLA, Khachatur Abovyan's Collection, №16, 151 pages.
3. *Abovyan, №16a* - GAT, Khachatur Abovyani archiv / SMLA, Khachatur Abovyan's Collection, №16a, 204 pages.
4. *Abovyan, №58* - GAT, Khachatur Abovyani archiv / SMLA, Khachatur Abovyan's Collection, №58, 128 pages.
5. *Abovyan, №87* - GAT, Khachatur Abovyani archiv / SMLA, Khachatur Abovyan's Collection, №87, 2 pages.
6. *Abovyan, №97* - GAT, Khachatur Abovyani archiv / SMLA, Khachatur Abovyan's Collection, №97, 4 pages.
7. *Abovyan, №152* - GAT, Khachatur Abovyani archiv / SMLA, Khachatur Abovyan's Collection, №152, 1 pages.
8. *Abovyan, №182* - GAT, Khachatur Abovyani archiv / SMLA, Khachatur Abovyan's Collection, №182, 4 pages.
9. *Abovyan, №188* - GAT, Khachatur Abovyani archiv / SMLA, Khachatur Abovyan's Collection, №188, 8 pages.
10. *Armenian collection №427* - Public Library of the Academy of Sciences of Ukraine, Department of Manuscripts, Collection of the Kyiv Theological Academy, №427, ("Armenian collection"), 24 pages.

Անահիտ Հակոբյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ տեքստաբանություն, 19-րդ դարի հայ գրականություն, բանահյուսություն, հայ-գերմանական գրական կապեր, արվեստի պատմություն: Որպես տեքստա-բան՝ մասնակցել է Մ. Նալբանդյանի, Գ. Տեր-Մկրտչյանի երկերի ակադեմիական

հրատարակությունների պատրաստման աշխատանքներին: Հեղինակ է 10 գիտական հոդվածի և մեկ մենագրության:

ORCID ID: 0000-0002-3869-5261
anahithakobyan@litinst.sci.am

Anahit Hakobyan – PHD in Philology, Researcher at the Institute of Literature after Manuk Abeghyan of NAS of RA. Scientific interests: Textology, Armenian Literature of 19th century, Folklore, Armenian-German Literary Connections, History of Art. As Textologist participated in the preparation of the academic editions of the Works of M. Nalbandian, G. Ter-Mikirtchian. Author of 10 articles and one monograph.

ORCID ID: 0000-0002-3869-5261
anahithakobyan@litinst.sci.am

Анаит Акопян – кандидат филологических наук, научный сотрудник Института литературы им. Манука Абеяна НАН РА. Научные интересы: текстология, армянская литература 19-го века, фольклор, армяно-немецкие литературные связи, история искусств. Как текстолог, участвовала в подготовке академических изданий сочинений М. Налбандяна, Г. Тер-Мкртчяна. Автор 10 статей и одной монографии.

ORCID ID: 0000-0002-3869-5261
anahithakobyan@litinst.sci.am

Ընդունվել է տպագրության 1.12.2023թ.: